

## ԱՀԱՐՈՆ ՌՈՒՇԱՆՅԱՆ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ու էլեկտրոնիկայի ինստիտուտի տեղեկատվության անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի ծրագրային ճարտարագիտության բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող

### ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ. ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածը նպատակաուղղված է՝ դիտարկելու էլեկտրոնային դատական վարույթների կազմակերպչական և իրավական ապահովման զարգացման ակտուալ համակարգային որոշ խնդիրները, էլեկտրոնային դատավարության միասնական համակարգի ստեղծումը՝ հաշվի առնելով ՀՀ նախագահի կարգադրությունը ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարական ծրագիրը, ինչպես նաև ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 11-ի N 183-Լ «Հայաստանի թվայնացման 2021-2025 ռազմավարության միջոցառումների ծրագրին և արդյունքային ցուցանիշներին հավանություն տալու մասին» որոշումը:

*Հիմնարարներ – իրավական ինֆորմատիկա, էլեկտրոնային դատարան, տեղեկատվական տեխնոլոգիաներ, դատական վարույթ, տեղեկատվական անվտանգություն:*

Գիտության զարգացման ներկա փուլում տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը գիտելիքի ձեռքբերման և օգտագործման գերիշխող մեթոդներից է: Իրավագիտությունն այս առումով բացառություն չէ: Գիտությունների այս փոխկապակցվածության մեջ առանձնահատուկ նշանակություն ունեն տեղեկատվության ստացման, մշակման, փոխանցման և պահպանման հատուկ տեխնոլոգիաները, որոնք սահմանվում են որպես տեղեկատվական տեխնոլոգիաներ:

Իրավաբանական ինֆորմատիկայի մեթոդների և միջոցների կիրառումը դատական գործունեության թվայնացման կազմակերպման և իրավական ապահովման ոլորտում գործնականում ունի կարևոր նշանակություն և պահանջում է համակարգի արդիականացում ու շարունակական զարգացում: Իրավական ինֆորմատիկայի առանձնահատկությունն այն է, որ այն ներկայացնում և համակարգված կերպով փոխկապակցում է երկու ոլորտ՝ իրավական և տեխնիկական:

Իրավական ինֆորմատիկան՝ դատավարական գործողությունների կատարումն է թվային ձևով[1]: Բացի այդ, օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաները, հնարավոր է իրականացնել ոչ միայն ընթացակարգային, այլ նաև իրավական առումով նշանակալի այլ գործողություններ,

օրինակ՝ հարկային ծառայության ինտերակտիվ առցանց ծառայություններ, անձնագրերի և վիզաների գրանցում, տարբեր լիցենզիաների ձեռքբերում, տրանսպորտային միջոցների հաշվառում և հաշվառումից հանում, սեփականության իրավունքի և անշարժ գույքի հետ գործարքների պետական գրանցման փաստաթղթերի էլեկտրոնային գրանցում և այլն:

Մեր ժամանակներում անհրաժեշտություն է կառավարության կողմից արդարադատության ոլորտի թվայնացումը: էլեկտրոնային կառավարման գործիքներն էապես բարձրացնում են արդարադատության ոլորտի մարմինների աշխատանքի արդյունավետությունը՝ թույլ տալով նորարարական եղանակով լուծել արդարադատության համակարգի առջև ծառայած խնդիրները: Էլեկտրոնային միասնական համակարգի ներդրումը նպատակ ունի նաև ապահովել արդարադատության առավել մատչելիությունը, իրավական ինստիտուցիոնալ հենքի արդիականացումը, պարզեցնել վարչարարությունը, ապահովել քաղաքացիակենտրոն մոտեցումները, ներդնել որակյալ, հասանելի և մատչելի ծառայությունների մատուցման մոդելը՝ անձանց հնարավորություն տալով ներկայացնել իրենց խնդիրներն ու պահանջներն արդարադատության ոլորտի ինստիտուտներին:

Իրավական ինֆորմատիկայի զարգացումը պահանջում է ոչ միայն դատական գործընթացների կազմակերպման տեղեկատվական համակարգերի ներդրման խնդիրների լուծում, այլ նաև արդարադատության կազմակերպչական և իրավական մեխանիզմների մի շարք գործիքների մշակում: Իրավական ինֆորմատիկայի հիմնական նպատակներն են՝ արդարադատությունն ավելի մատչելի դարձնելը, դատարան դիմելու և դատական գործընթացներին մասնակցելու հետ կապված ժամանակի և ֆինանսական ծախսերի կրճատումը, թափանցիկությունը, դատարանների ծանրաբեռնվածության կրճատումը, արդյունավետ կառավարումը: Այս ընթացակարգերին հասնելու համար պահանջվում է համապատասխան կազմակերպչական և իրավական աջակցություն, օրինակ՝ անմիջապես տնից կամ աշխատավայրից էլեկտրոնային եղանակով դատարան ուղարկված հայցերի քննարկման համար դրանց էլեկտրոնային փոստով ստացված ապացույցների ներկայացումը՝ առաջին ատյանի, ներառյալ վերաքննիչ ու վճռաբեկ դատարանների նիստերին օգտագործվող տեսակոնֆերանսի միջոցներով առցանց դատական նիստին մասնակցությունը:

Իրավական վարույթը (անգլերեն՝ court procedure, legal proceedings) դատավարական օրենսդրության համաձայն, գործը դատարանում քննելու գործընթաց է [2]: Դատական վարույթում ներգրավված է ոչ միայն դատարանը, այլ նաև այլ սուբյեկտներ (քննիչ, դատախազ, փորձագետ, փաստաբան, մասնագետներ և այլն): Նոր տեխնոլոգիաների կիրառումը դատավարության ոլորտում փոխում է դրանց գործունեության հայեցակարգային հիմքերը: Չևավորվող նոր սոցիալական հարաբերությունները պետք է արտացոլվեն իրավական կարգավորման նոր միջոցներով և էլեկտրոնային ձևով դատական գործընթացի սուբյեկտների տեղեկատվական փոխգործակցության կազմակերպչական աջակցությամբ: Էլեկտրոնային դատական վարույթների կազմակերպչական, իրավական ապահովման ոլորտում առաջնահերթ խնդիր է էլեկտրոնային դատական վարույթի տեղեկատվական միասնական ենթակառուցվածքի ձևավորումը, որը կծառայի որպես դատական համակարգի միասնականության հիմք[3]: Իրավական դատավարության տեղեկատվական ենթակառուցվածք ասելով հասկանում ենք՝ փոխկապակցված աշխարհագրորեն բաշխված ավտոմատացված տեղեկատվական համակարգերի, տեղեկատվական և հեռահաղորդակցական ցանցերի (ներառյալ՝ նեյրոնային ցանցերը և ինտերնետ ռեսուրսները), տվյալների փոխանցման ուղիները, փոխարկման

միջոցները և իրավական ոլորտում տեղեկատվական հոսքերի կառավարումը: Դատական վարույթի տեղեկատվական ենթակառուցվածքը ներառում է նաև տեղեկատվական ռեսուրսներ (էլեկտրոնային գրադարաններ, էլեկտրոնային դատական արխիվներ, տվյալների շտեմարաններ և այլ բազաներ, պետական մարմինների և հիմնարկների կայքեր, լեզվական աջակցության միջոցներ (դասակարգիչներ, բառարաններ), տեխնոլոգիաներ՝ ռեսուրսների պահպանման և օգտագործման, դատավարական խնդիրների լուծման համար):

Դատավարության տեղեկատվական ենթակառուցվածքի յուրաքանչյուր բաղադրիչի արդիականացման մակարդակը և այս ոլորտում հարաբերությունները կարգավորող որակապես նոր կազմակերպարավական ինստիտուտները կանխորոշում են էլեկտրոնային արդարադատության տեխնոլոգիաների արդյունավետությունը: Այս տեխնոլոգիաների արդյունավետության գնահատումն ուղղակիորեն կախված է դատաիրավական բարեփոխումների ընթացքում համակարգային թերությունների վերացումից, օրինակ՝ էլեկտրոնային ստորագրության միջոցով: Փաստաթղթերի կառավարման արդյունավետ էլեկտրոնային համակարգի ստեղծումն ապահովում է դատարան ներկայացված գործերի քննության ժամանակի կրճատում, իսկ դատական նիստի պարտադիր ձայնագրման իրականացումը նպաստում է գործընթացի բոլոր մասնակիցների կողմից ընթացակարգային և էթիկական չափանիշների պահպանմանը: Իրավական վարույթների տեղեկատվական, իրավական և հեռահաղորդակցական աջակցության ոլորտում խնդիր է առաջանում միասնական տեղեկատվական հարթակի ստեղծման համար:

Ըստ ներկայացված խնդրի առաջարկվում է՝

- ՀՀ դատական համակարգի միասնության սկզբունքի կոնկրետ իրականացում,
- արդարադատության տեղեկատվական և հեռահաղորդակցական աջակցության որակի բարձրացում,
- էլեկտրոնային դատական վարույթների տեխնոլոգիաների համակարգված զարգացման ապահովում և դատական համակարգի օրենսդրության կատարելագործում՝ ՀՀ դատական համակարգի տեղեկատվական ստանդարտների հիման վրա,
- դատական գործունեության ոլորտում էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսների կառավարման արդյունավետության բարձրացում:

Էլեկտրոնային կառավարման տեխնոլոգիաների E-Government [4] (էլեկտրոնային պետություն) ձևավորման և օգտագործման միջազգային

պրակտիկան ցույց է տալիս, որ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները դարձել են աշխարհի շատ երկրների սոցիալ-տնտեսական զարգացման արդյունավետ գործիք: ՄԱԿ-ի կողմից հրապարակված «Աշխարհի երկրների վարկանիշն ըստ զարգացման մակարդակի E-Government [5] զեկույցը համակարգված գնահատում է տարբեր երկրներում էլեկտրոնային կառավարման տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՀՏ) գործնական կիրառման արդիականությունը: Վերոնշյալ զեկույցում ուսումնասիրված երկրները դասակարգվել են ըստ հետևյալ երեք հիմնական չափորոշիչների՝ ինտերնետ ծառայությունների ծածկույթ և որակ, ՏՀՏ ենթակառուցվածքի զարգացման մակարդակ, մարդկային կապիտալի որակը ՏՀՏ ոլորտում: Երեք չափորոշիչներից յուրաքանչյուրը կազմվում է մի քանի չափորոշիչներով (ներառյալ տեղեկատվական ծառայությունների և պետական ծառայությունների կայքերի քանակը, դատական համակարգի կայքերն ու պորտալները): Դասակարգման մեջ դրական ցուցանիշ են ունեցել այն երկրները, որտեղ ներդրված է եղել էլեկտրոնային արդարադատության համակարգը: Դրական է գնահատվել նաև այդ երկրներում քաղաքացիների համար դրանց հասանելիությունը, համացանցից օգտվողների հարաբերական թիվը, ֆիքսված և բջջային հեռախոսակապից օգտվողների թիվը, բնակչության համակարգչային գրագիտության մակարդակը, այս ոլորտում հարաբերությունները կարգավորող իրավական դաշտի պարամետրերը և այլ պարամետրերը:

Հաշվի առնելով իրավական ինֆորմատիկայի տեխնոլոգիաների զարգացումն ապահովող միասնական տեղեկատվական տարածքի ձևավորման ներքին և արտաքին մոտեցումները՝ կարելի է առանձնացնել համակարգային խնդիրների և նրանց լուծումների երեք փոխկապակցված խմբեր՝

1. Առաջին խումբը համատեղում է դատական համակարգի գործունեության և էլեկտրոնային փաստաթղթերի կառավարման համակարգերի գործունեության, զարգացման, կազմակերպչական և իրավական աջակցության խնդիրները՝ դատական գործընթացի յուրաքանչյուր փուլում էլեկտրոնային տեղեկատվական ռեսուրսները, ներառյալ՝ էլեկտրոնային դատական արխիվների ձևավորումը, որտեղ օգտագործվում են տեսակոնֆերանս կապի համակարգեր:

Այս խնդիրների լուծումն իրականացվում է միասնական մոդելային համաձայնագրերի, ինչպես նաև սահմանադրական, քաղաքացիական (այդ թվում՝ տնտեսական վեճերի), վարչական և քրեա-

կան դատավարության ոլորտներում տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգերի մշակման միջոցով: Ստեղծված կանոնակարգերը պետք է ներառվեն էլեկտրոնային փաստաթղթերի կառավարման և դատական վարույթի տեխնոլոգիաների աշխատանքում՝ էլեկտրոնային դատական վարույթ ապահովող բոլոր մասնակիցների գործունեության արդյունավետ փոխգործակցության և որակի վերահսկման իրականացման համար:

2. Երկրորդ խումբը ներառում է արտաքին էլեկտրոնային փոխգործակցության կազմակերպչական և իրավական աջակցության խնդիրները:

Դատարանների էլեկտրոնային փոխգործակցության միջգերատեսչական ստանդարտների (կանոնակարգերի) ստեղծում և ներդրում պետական տեղեկատվական համակարգերի հետ՝ որպես ապացույց օգտագործվող տեղեկատվության ներկայացման համար դատական վարույթում, ինչպես նաև պատիժների կատարման կազմակերպման և դատական այլ որոշումների կատարման վերաբերյալ:

3. Երրորդ խումբը ներառում է տեղեկատվական անվտանգության ոլորտում հարաբերությունների իրավական և տեխնիկական կարգավորման կազմակերպչական աջակցության խնդիրներն էլեկտրոնային արդարադատության համար՝ անվտանգ տեղեկատվական և հաղորդակցական միջավայրի համակարգված ձևավորմամբ (անվտանգ կապի պաշտպանության ուղիներ և համակարգչային համակարգեր, որոնք ապահովում են տեղեկատվության ընդունումն ու փոխանցումը և ապացույցների ու այլ դատավարական տեղեկատվության առաջնային մշակումը): Այն կազմակերպում է օգտատերերի միանշանակ հեռահար նույնականացման և դատական տեղեկատվության նկատմամբ նրանց մուտքի իրավունքի թույլտվության հարցերի լուծումը: Միաժամանակ, սահմանվում է պետական հավաստագրման կենտրոնների և էլեկտրոնային ստորագրությունների ծառայություններից օգտվելու միասնական ընթացակարգ:

Հաշվի առնելով վերը նկարագրված հիմնախնդիրները՝ ՀՀ-ում էլեկտրոնային արդարադատության համակարգի ներդրման նպատակով, առաջարկվում է ստեղծել առցանց հարթակ: Հարթակ մուտք գործելիս առաջին էջը գրանցման էջն է, որը կազմված է երկու մասից՝ առաջին մասում տեսաձայնագրություն գրանցման համար՝ հստակ ուղեցույցներով: Հաջորդ մասը՝ բուն գրանցման դաշտը, որտեղ կայքի անվտանգության բարձրացման նպատակով կօգտագործվի մեկանգամյա գաղտնաբառի նույնականացմամբ գրանցում: Մեկանգամյա գաղտնաբառի նույնականացումը սովորա-

բար օգտագործվում է ի լրումն գաղտնաբառի նույնականացման՝ երկգործոն նույնականացում իրականացնելու համար: Այս հայեցակարգում օգտատերը պետք է տրամադրի երկու տեսակի մուտքի տվյալներ՝ գաղտնաբառ և մեկանգամյա գաղտնաբառեր ստեղծելու սարք: Երկու գործոնների առկայությունը թույլ է տալիս զգալիորեն բարձրացնել անվտանգության մակարդակը: Մեկանգամյա օգտագործման գաղտնաբառեր ստեղծելու տարբեր աղբյուրներ կան, բայց ամենաապահովը սարքավորումների կամ ծրագրային ապահովման թրքեմներն են, որոնք կարող են ստեղծել այդ գաղտնաբառերը՝ հիմնվելով դրանց մեջ մուտքագրված գաղտնի բանալու, որը ակտիվ կլիմի որոշակի ժամանակով: Մերվերում պահվում են նաև օգտատերերի գաղտնի բանալիները, որոնք հանդիսանում են սեփականության գործոն, ինչը թույլ է տալիս ստուգել մուտքագրված մեկանգամյա գաղտնաբառերը: Նշանների ապարատային ներդրման օրինակ է RSA SecurID [6]: Անվտանգության և արդյունավետության բարձրացման նպատակով մուտքագրված տվյալները կարխիվացվեն սերվերում (որը կլիմի նույնը յուրաքանչյուր դատարանի համար): Գրանցման պատուհանում կլիմի նաև կոճակ իրավաբանների համար, այսինքն՝ գրանցման ժամանակ սեղմելով այդ կոճակին բացվում է իրավաբանների համար գրանցման էջ, և նրանց գրանցումը կիրականանա արդեն հատուկ տրամադրված ծածկագրերի միջոցով: Գրանցումից հետո բացվում է նոր էջ, որտեղ դասակարգված կլիմեն անհատի անձնական էջը, որոնման դաշտը՝ որոնումն իրականացվում է ըստ հետևյալ չափանիշների՝ գործի տեսակ (քրեական, քաղաքացիական, վարչական), դատարանի անվանում և դատավորի անուն, ազգանուն, հայրանուն, գործընթացի մասնակցի անուն, ազգանուն, հայրանուն, դատական նիստի ամսաթիվ (վճռի կայացում), դատարանի որոշման բովանդակություն, օրենսդրություն, ներառյալ Սահմանադրությունը, միջազգային փաստաթղթերը և ազգային օրենսգրքերը (քրեական, քաղաքացիական, քրեական դատավարություն, քաղաքացիական դատավարություն և այլն): Կլիմեն նաև մի քանի պատուհաններ նախատեսված՝ Սահմանադրական, ընդհանուր իրավասության դատարանների առաջին, ՀՀ վերաքննիչ, ՀՀ վճռաբեկ դատարանների, ինչպես նաև մասնագիտացված դատարանների էջերի համար, որոնց միջոցով կարող ենք սեղմել համապատասխան պատուհանին և մուտք գործել տվյալ դատարանի էջ, որտեղ կարող ենք թողնել դիմում, ստանալ անհրաժեշտ տեղեկատվություններ, որտեղ կլիմի նաև չափորտ և առցանց օգնության նամակագրությունների բա-

ժին, որտեղ օգտատերը կկարողանա հղել իրեն հուզող հարցերը և ստանա արագ պատասխաններ: Առանձին էջ է նախատեսվում դատական նիստերի առցանց անցկացմանը, որոնք հնարավորություն են տալիս աուդիո և տեսակապ հաստատել մեկից ավելի կողմերի միջև տարբեր վայրերում: Այս հարողագրությունը ներառում է իրավական ֆայլերի և փաստաթղթերի փոխանակում: Փաստաթղթեր են՝ դատական ծանուցագրերը, դատավճիռները և դատական այլ ակտերը: Մասնակից կողմերը կարող են ընթացքում ուղարկել փաստաթղթերը համապատասխան դաշտի միջոցով, ինչպես նաև կոճակներ ձայնի կարգավորման համար: Չայնագրության պատճենները տրամադրվում են վարույթի կողմերին (ըստ պահանջի) և դատավորին՝ նիստի ավարտին: Աուդիո և վիդեո ձայնասկավառակները պահվում են գործի նյութերում:

Անձնական էջում անհատը հնարավորություն կունենա հետևել իր դիմումների ընթացքին, օգտվել նամակագրության բաժնից իր փաստաբանի հետ, այդ էջից կարող է միանալ իր դատավարության ընթացքին՝ համապատասխան անհատական նույնականացման համարի միջոցով: Փաստաբանի անձնական էջում կլիմեն պատուհաններ որտեղ նա կարող է պահել իր փաստաթղթերը, կարող է դրանք դասակարգել, պահել դատական նիստի ձայնագրություններ, միանալ իր դատավարության ընթացքին՝ համապատասխան անհատական նույնականացման համարի միջոցով և մուտք գործել նամակագրության բաժին:

Կայքի վերջնամասում կլիմի նաև տեխնիկական աջակցության պատուհան, կայքի վերաբերյալ տեխնիկական խնդիրների, հարցերի համար:

Հարկ է նշել, որ տեղեկատվության պաշտպանությունն իրավական, կազմակերպչական և տեխնիկական միջոցների ընդունումն է, որն ուղղված է նշված գործառնությունների իրականացմանը [7]:

Իրավական պաշտպանությունը ներառում է արդյունավետ կարգավորում նախատեսող այնպիսի իրավական ակտերի մշակում ու կիրառում, որոնք կարգավորում են տեղեկատվության պաշտպանության սուբյեկտների հարաբերությունները, ինչպես նաև դրանց կատարման նկատմամբ վերահսկողությունն ու հսկողությունը:

Տվյալների բազաների պաշտպանությունը ներառում է տեղեկատվության պաշտպանության ապահովումը մի շարք միջոցներից, որոնք խոչընդոտներ են ստեղծում չարտոնված անձանց ներթափանցմանը:

Էլեկտրոնային իրավական համակարգի պաշտպանությունն ապահովելու համար առաջարկվում է առաջնորդվել հետևյալ պահանջներով՝

1. տեղեկատվության պաշտպանության համակարգը պետք է համապարփակ լուծում տա հետևյալ սպառնալիքներին՝ չարտոնված մուտքը (չլիազորված մուտք) էլեկտրոնային իրավական համակարգի տեղեկատվություն, պաշտպանված տեղեկատվության արտահոսք տեխնիկական ուղիներով, չարտոնված ազդեցություն տեղեկատվության վրա (տեղեկատվություն կրողների վրա):

2. Համակարգը ստեղծելիս տեխնիկական առաջադրանքի մշակմանը նախորդում են ավտոմատացված համակարգի պահանջների ձևավորումը և ավտոմատացված համակարգի հայեցակարգի մշակումը:

Ավտոմատացված համակարգի պահանջների ձևավորման փուլում իրականացվում է պաշտպանվող տեղեկատվության ցանկի որոշումը, այն է՝ տեղեկատվական անվտանգության սպառնալիքների բնույթի որոշումը, որը կապված է պաշտպանված տեղեկատվության, չարտոնված տեղեկատվության, տեխնիկական ուղիներով տեղեկատվության արտահոսքի և տեղեկատվության վրա չարտոնված ազդեցության հետ:

**Տեղեկատվական անվտանգությանը սպառնացող վտանգների մոդելի մշակում:** Ավտոմատացված համակարգի հայեցակարգի մշակման փուլում իրականացվում է ստեղծված տեղեկատվական պաշտպանության համակարգի պահանջների իրականացման հնարավորությունների գնահատում տեղեկատվության պաշտպանության համակարգ ստեղծելու համար: Անհրաժեշտ լիցենզիա ունեցող կազմակերպությունների անհրաժեշտ ներգրավման հիմնավորումն է՝ տեղեկատվական պաշտպանության համակարգի ստեղծման մոտավոր ժամկետների գնահատումը, ստեղծված տեղեկատվության պաշտպանության համակարգի մշակման և ներդրման համար նյութական, աշխատանքային և ֆինանսական ծախսերի գնահատումը:

Առաջնահերթ միջոցառումներից է անձնակազմի վերապատրաստումը և նրանց կարողությունների փորձարկումը՝ ապահովելու տեղեկատվական անվտանգության համակարգը և ամբողջությամբ էլեկտրոնային դատարանի գործունեությունը տեղեկատվական անվտանգության հետևյալ ոլորտներում՝ պաշտպանություն չարտոնված հարձակումներից, ներառյալ գաղտնի ուղիներով իրականացվողները [8, 9] պաշտպանություն կրիպտոգրաֆիկ միջոցներով, հակավիրուսային պաշտպանությունը, պաշտպանություն արտահոսքից կեղծ էլեկտրամագնիսական ալիքների ճառագայթման միջոցով (PEMIN), շենքերի, տարածքների, շինությունների և վերահսկվող տարածքների

ֆիզիկական պաշտպանություն, պաշտպանություն արտաքին ազդող գործոնների սպառնալիքներից, կապի ցանցերի հետ փոխկապակցման ժամանակ պաշտպանություն այլ էլեկտրոնային դատարանից:

*Հետազոտության ընթացքում ներկայացվում է էլեկտրոնային դատավարությունը՝ որպես միասնական համակարգ, որա ներդրման անհրաժեշտությունը, ինչի արդյունքում, կրարձրանա արդարադատության համակարգի մարմինների գործունեության արդյունավետությունը և թափանցիկությունը, կատեղծվի արդարադատության ոլորտում վիճակագրության հավաքագրման և հրապարակման միասնական ու ճշգրիտ գործիքակազմ, հիմքեր կատեղծվեն արդարադատության ոլորտում, տվյալահեն քաղաքականության մշակման համար [10]:*

Հետազոտության ընթացքում առաջարկվում է նաև էլեկտրոնային արդարադատության կայքէջի մոդելի ստեղծումը և տվյալների համակարգի իրատեսական պաշտպանությունը: Կայքէջի ստեղծման առավելություններից է՝ թափանցիկությունը, այսինքն՝ կայքի տեխնոլոգիաների օգտագործումը թույլ է տալիս որոշ դեպքերի պատշաճ և ճշգրիտ ձայնագրություններ, ի տարբերություն թղթային գործընթացի, որտեղ որոշ ֆայլեր կարող են տեղահանվել կամ կեղծվել, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ դատական գործընթացում գտնվող կողմի վրա: Ֆայլերի և կապի հեշտ հասանելիություն՝ կայքի տեխնոլոգիաների օգտագործման միջոցով իրավաբանները կարող են հեշտությամբ օգտվել առցանց իրավական փաստաթղթերից, գործերի փաթեթներից: Այն նաև օգնում է դատավորի և փաստաբանների միջև հեշտ հաղորդակցմանը՝ կապված դատական նիստերի հետ:

Միասնական համակարգի մոտեցման մեջ էական նշանակություն է տրվում համակարգի ուսումնասիրված օբյեկտների վարքագծի հավանական բնույթի բացահայտմանը: Համակարգային մոտեցման կարևոր առանձնահատկությունն այն է, որ ոչ միայն օբյեկտը, այլ նաև հետազոտական գործընթացն ինքնին հանդես է գալիս որպես բարդ համակարգ, որի խնդիրն է, մասնավորապես, օբյեկտի տարբեր մոդելների միավորումը մեկ ամբողջության մեջ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. 5 հարց ու պատասխան էլեկտրոնային արդարադատության համակարգի մասին <https://mediamax.am/am/news/digitization/38876/>:
2. Введение в правовую информатику. Справочно-правовые системы КонсультантПлюс: учебник для вузов / под. общ. ред. Д. Б. Новикова, В. Л. Камынина. М.: КонсультантПлюс – Новые Технологии, 2009. 256 с.
3. Д. А.Ловцов, В. А.Ниссов Актуальные проблемы создания и развития единого информационного пространства судебной системы России // Информационное право. 2013. N 5. 18 с.
4. Д. А.Ловцов, И. В. Ермаков Классификация и модели нетрадиционных информационных каналов в эргасистеме // НТИ РАН. Сер. 2. Информ. процессы и системы. 2005. N 2. 7 с.
5. Ловцов Д. А., Ермаков И. В. Защита информации от доступа по нетрадиционным информационным каналам // НТИ РАН. Сер. 2. Информ. процессы и системы. 2006. N 9. 9 с.
6. Ben Emmerson, Andrew Ashworth, Alison Macdonald, Human Rights and Criminal Justice (2012).
7. Caves, R. W. (2004). Encyclopedia of the City. Routledge.
8. The United Nations E-Government Survey: 2014.
9. <https://www.securid.com/>,(վերջին անգամ դիտվել է 24.02.2022).
10. Josh Fruhlinger What is information security? Definition, principles, and jobs [https://www.csoonline.com /article/3513899/what-is-information-security-definition-principles-and-jobs.html?fbclid=IwAR3eH-SR2dEpEI -5mwVgC7yRD-oU\\_B4IUM6TyNij0Yb0-kURitbMI8Mppow](https://www.csoonline.com /article/3513899/what-is-information-security-definition-principles-and-jobs.html?fbclid=IwAR3eH-SR2dEpEI -5mwVgC7yRD-oU_B4IUM6TyNij0Yb0-kURitbMI8Mppow) (վերջին անգամ դիտվել է 24.02.2022).

**Աարոն Րուսանյան**

Магистрант 2-го курса отдела инженерии программного обеспечения кафедры информационной безопасности и программного обеспечения института информационных и телекоммуникационных технологий и электроники Национального политехнического университета Армении

РЕЗЮМЕ

*Некоторые вопросы, связанные с необходимостью создания системы электронного правосудия: Исследования по созданию системы электронного правосудия*

В данной статье ставится задача рассмотреть некоторые актуальные системные вопросы развития организационно-правового обеспечения электронного судопроизводства, создания единой системы электронного судопроизводства с учетом Стратегического плана Президента РА по правовым и судебным реформам на 2019-2023 гг., а также постановление Правительства Республики Армения от 11 февраля 2021 года N 183-Л “Об утверждении результатов Плана действий цифровой стратегии Армении на 2021-2025 годы”.

*Ключевые слова: правовая информатика, электронный суд, информационные технологии, судебная практика, защита информации.*

**Aharon Rushanyan**

2-nd Year Master Student of the Chair of Software Engineering, Department of Information Security and Software Development of the Institute of Information and Telecommunication Technologies and Electronics of the National Polytechnic University of Armenia

SUMMARY

*Some issues related to the need to establish an e-Justice system. Research on the establishment of an e-justice system*

This article aims to consider some topical systemic issues in the development of the organizational and legal support of e-justice, creation of a unified e-justice system, taking into account the Strategic Plan of the President of the Republic of Armenia on legal and judicial reforms for 2019-2023, as well as the Decree of the Government of the Republic of Armenia dated February 11, 2021 N 183-L “On the approval of the results of the Action Plan of the digital strategy of Armenia for 2021-2025”.

*Key words: legal informatics, electronic court, information technologies, judicial practice, information protection.*

Բնագիրը ներկայացվել է 25.02.2022թ.  
Ընդունվել է տպագրության 01.03.2022թ.  
Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)  
իրավաբանական գիտությունների թեկնածու Ս. Քրմոյանը